

## ԱԼԻՇԱՆԻ ՇԻՐՄԻՆ ԱՈՋԵՒ

### Ա

Քեզի եկայ՝ իբր ուխտաւոր մը յոգնած,  
Որ կը գըտնէ հուսկ փոխարէն իղձերուն  
Շիրիմ մը՝ հոն ծընրադրելու սիրտը բաց,  
Եւ խոկալու, համբուրելու լոյս ածին:

Յոս կը նընջե՛ս. Քեզ կը պատէ լըռութիւնն.  
Ովկիան մ'ես՝ գոր կը ծածկէ այդ պատանք.  
Կարմիր հըրդեհ մ'որ մոխրի տակ կ'առնէ քուն.  
Յոս կը նընջես. ինչպէս հըրատն ամպին տակ:

Որթի ճիւղերն եւ ուռիներ տըխրամած՝  
Դեռ արձագանգը քընարիդ կը պահեն.  
Յովէն՝ կ'ողբան շիրմիդ չորս դին կամ լըռած  
Շեշտեղ մնացորդ մը դարձեալ թեզ կը բերեն:  
Շուրջըդ ծաւի Ադրիականն յար կու լայ,  
Ուրկէ վիհեր չափեցիր դու մըտածման.  
Սուրբ ածինսիդ սափորն է այդ ծովն հիմա,  
Մինչ լայն ճակատիդ լայն օրօրոցն եղաւ ան:

Ո՛չ. մարդըս չէ, լոկ բնութիւնն է՝ որ հանճար  
Մ'օրրել կըրնայ, վերջը պատանքն իր ըլլալ.  
Տիեզերքն ունի իր մարգարիտը անճառ՝  
Որուն կու տայ մարդ պահ մ'իր ծոցն հիւրընկալ: